ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/7

ք.Երևան

«17» մարտ 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Դ. Շահբազյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների կատարելու ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Պահպանել գաղտնիությունը: Կատարողը հանձն է առնում գաղտնի պահել ողջ այն տեղեկատվությունը, որը հանրամատչելի չէ և չի ստանձնի որևէ այլ հանձնարարություն, որը կհանգեցնի շահերի բախման գերակա հանձնարարության նկատմամբ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում): Ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի համար Կատարողը պետք է ներկայացնի հաշվետվություն՝ համաձայն Պայմանագրի հավելված 1-ի պայմանների:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող

աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը: ՀՀ ֆինանսների նախարարությունը կներկայացնի իր դիրքորոշումը կամ կընդունի յուրաքանչյուր փուլի հաշվետվությունը 1-ին փուլի համար 10 աշխատանքային օրվա ընթացքում, 2-րդ փուլի համար՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, 3-րդ փուլի համար՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7 140 000 (յոթ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի հավելված 2-ում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Վճարումը կիրականացվի ծառայության մատուցման արդյունքը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ամբողջական ընդունվելուց հետո:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1

կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64
ՀՎՀՀ՝ 02629081	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 900011017523	Հ/Հ 1570063238750100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 02677364
ՖՆ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մարությունյան	_____ Դ. Շահբազյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 17 » մարտի 2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1 Ծառայության նպատակներն ու շրջանակը

1.1 Ընդհանուր նպատակը

էլեկտրոնային աճուրդների անցկացման ծրագրային ապահովման (այսուհետև՝ նաև Ծրագրային ապահովում կամ Համակարգ) ֆունկցիոնալ գործառույթները՝ տեխնիկական և բիզնես պրոցեսների տեսակետից համապատասխանեցնել ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն և ՀՀ կառավարության 18/05/2017թ. N 534-Ն որոշումների մեջ համապատասխանաբար ՀՀ կառավարության 10/10/2019թ. N 1422-Ն և ՀՀ կառավարության 30/01/2020թ. N 72-Ն որոշումներով կատարված փոփոխությունների պահանջներին (որոշումները հասանելի են arlis.am և procurement.am հասցեներով գործող կայքերում):

1.2 Ծառայություններ ծրագրի շրջանակներում

Կատարողը Շահառուին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրելու հետևյալ հիմնական ծառայությունները՝

- Ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների մշակում, թեստավորում և ներդրում՝ բիզնես պրոսեցների համապատասխանեցում սույն տեխնիկական առաջադրանքի 1.1 կետում նշված ՀՀ կառավարության որոշումների պահանջներին.
- Համակարգի սպասարկման, ինչպես նաև համակարգում առկա տեղեկատվության աուդիտի նկատառումներով ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրվի համակարգի օգտվողների գործողությունների վերաբերյալ համակարգի ադմին-օգտվողի կողմից հարցումներ իրականացնելու հնարավորություն՝ ըստ սկսած/մինչև ժամանակահատվածի, ըստ գործողության տեսակի, ըստ պատվիրատուի, ըստ տնտեսական օպերատորի, ըստ ընթացակարգերի.
- ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրվի համակարգում ընթացող գործողությունների և գործընթացների մասին հիշեցումների՝ ավտոմատ ծանուցումների համար նախատեսած, սպասարկող կազմակերպության կողմից հատուկ էլեկտրոնային փոստ, որով հնարավոր կլինի կառավարել ընթացիկ միջադեպերը.
- էլեկտրոնային աճուրդի համակարգն օգտագործող պատվիրատուների և տնտեսական օպերատորների ձեռնարկների համապատասխանեցում նոր սահմանվող պահանջներին (ձեռնարկները հասանելի են procurement.am հասցեով գործող կայքում): Ընդ որում տնտեսական օպերատորին վերաբերող ամբողջական ձեռնարկը ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրվի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով.
- Ծրագրային ապահովման կիրառման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության առնվազն 10 աշխատակիցների համար առնվազն 12 ժամյա վերապատրաստման ծրագրի կազմակերպում.

- Ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկում և երաշխավորում՝ մինչև Ծառայության արդյունքի շահագործումը սկսվելու տարվան հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ընդ որում Ծրագրային ապահովման շահագործումը սկսվելուց 8 ամսվա ընթացքում Կատարողը պետք է անվճար ապահովի Ծրագրային ապահովման շահագործման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արձանագրված՝ բիզնես պրոսեցների և/կամ տեխնիկական պայմանների բարելավում կամ անհամապատասխանությունների շտկում՝ անհրաժեշտության դեպքում նաև Ծրագրային ապահովման մեջ փոփոխություններ կատարելու ձևով: Փոփոխությունները և/կամ բարելավումներն իրականացվում, թեթևավորում և իրական համակարգում ներդրվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նման պահանջ սահմանվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

1.3 Ակնկալվող արդյունքները

Պայմանագրի գործողության ընթացքում Կատարողը պետք է հասնի հետևյալ արդյունքների՝

- Էլեկտրոնային աճուրդների համակարգը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական առաջադրանքում նշված ֆունկցիոնալ և տեխնիկական չափանիշներին՝ համապատասխանելով էլեկտրոնային աճուրդների կազմակերպման և անցկացման մասին գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և բիզնես պրոսեցներին.
- Համակարգի սպասարկման, ինչպես նաև համակարգում առկա տեղեկատվության աուդիտի նկատառումներով ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրվի համակարգի օգտվողների գործողությունների վերաբերյալ համակարգի ադմին-օգտվողի կողմից հարցումներ իրականացնելու հնարավորություն՝ ըստ սկսած/մինչև ժամանակահատվածի, ըստ գործողության տեսակի, ըստ պատվիրատուի, ըստ տնտեսական օպերատորի, ըստ ընթացակարգերի.
- ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրվի համակարգում ընթացող գործողությունների և գործընթացների մասին հիշեցումների՝ ավտոմատ ծանուցումների համար նախատեսած, սպասարկող կազմակերպության կողմից հատուկ էլեկտրոնային փոստ, որով հնարավոր կլինի կառավարել ընթացիկ միջադեպերը.
- պետք է ապահովվի էլեկտրոնային աճուրդների համակարգի առկա գործակցությունը էլեկտրոնային գնումների համակարգում գործող ծրագրային այլ ապահովումների հետ (procurement.am, armeps.am/ppcm)՝ համաձայն գործող պայմանների և օրենսդրական կարգավորումների.
- պետք է ապահովվի էլեկտրոնային աճուրդի համակարգն օգտագործող պատվիրատուների և տնտեսական օպերատորների ձեռնարկների համապատասխանեցումը նոր սահմանվող պահանջներին՝ դրանք ներկայացնելով նոր խմբագրությամբ: Ընդ որում տնտեսական օպերատորին վերաբերող ամբողջական ձեռնարկը ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրվեն հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով.
- պետք է ապահովվի ՀՀ ֆինանսների նախարարության առնվազն 10 աշխատակիցների համար առնվազն 12 ժամյա վերապատրաստման ծրագրի կազմակերպում.
- պետք է ապահովվի Ծրագրային ապահոման տեխնիկական սպասարկում և երաշխավորում՝ մինչև Ծառայության արդյունքի շահագործումը սկսվելու տարվան հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ընդ որում Ծրագրային ապահովման շահագործումը սկսվելուց 8 ամսվա ընթացքում Կատարողը պետք է անվճար ապոհովի Ծրագրային ապահովման շահագործման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արձանագրված՝ բիզնես

պրոսեցների պրոցեսների և/կամ տեխնիկական պայմանների բարելավում կամ անհամապատասխանությունների շտկում՝ անհրաժեշտության դեպքում նաև Ծրագրային ապահովման մեջ փոփոխություններ կատարելու ձևով: Փոփոխությունները և/կամ բարելավումներն իրականացվում, թեստավորում և իրական համակարգում ներդրվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նման պահանջ սահմանվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Ծրագրային ապահովումը պետք է ծրագրավորվի և շահագործվի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

1.4 Համակարգի նկարագրությունը

Ծրագրային ապահովման մեջ կատարվող փոփոխությունների արդյունքը պետք է՝

- աջակցի բոլոր շահառուներին (ՀՀ ֆինանսների նախարարություն, պատվիրատուներ, տնտեսական օպերատորներ և այլ համապատասխան գործակալներ) գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և բիզնես գործընթացներով սահմանված իրենց դերակատարություններն ու աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգն ամբողջությամբ իրականացնելու հարցում.

- շահագործման տեսակետից պետք է լինի հարմար և ըմբռնելի, նկատի ունենալով, որ կարող են լինել տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքի և փորձի տարբեր մակարդակներ ունեցող օգտատերեր.

- լինի ընդլայնված և հեշտ ադապտացվող կարգավորումների և մշակումների առումով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և/կամ բիզնես գործընթացների ավելացմամբ կամ պակասեցմամբ պահանջվող փոփոխություններն իրականացնելու նպատակով:

Հարկ է նշել, որ SS սարքավորումների տրամադրում Պայմանագիր կնքող կողմերի կողմից չի նախատեսվում սույն ծրագրով: Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված ենթակառուցվածքում նոր մոդուլի տեղադրմանը, ապա համակարգը կտեղակայվի առկա ենթակառուցվածքում և կկառավարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական թիմի կողմից: Կատարողը պետք է սահմանի նվազագույն ռեսուրսների պահանջներ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող վիրտուալացված հաշվողական համակարգի հանդեպ:

Սերվերների փոխկապակցվածությունն ապահովելու է ՀՀ ֆինանսների նաարարությունում առկա կամ անհրաժեշտության դեպքում նոր ստեղծվող վիրտուալ ցանցերի շրջանակներում (VLAN) :

ՀՀ ֆինանսների նախարարությունը փնտրում է այնպիսի բաց աղբյուրով լուծում, որը ստանալուց և գործարկելուց հետո այլևս չի պահանջվի այլ տեսակի լիցենզավորման ծախսեր: Այն պարագայում, եթե Պայմանագիր կնքող կողմը որոշի վերջնական արտադրանքում ներառել նաև լիցենզավորված լուծումներ, ապա մշտական լիցենզիայի արժեքը պետք է ներառվի առաջարկում:

Առաջարկվող տեխնիկական կառուցվածքը պետք է ներառի և առնվազն հաշվի առնի ներքոգրյալ բաժիններում ներկայացված բաղադրիչները: Նախնական փուլում Պայմանագիր կնքող կողմերից պահանջվում է ստուգել, թե արդյոք ենթակառուցվածքի առկա բաղադրիչները կարող են օգտագործվել նոր տարրեր ավելացնելու փոխարեն:

1.4.1.1 Վեբ սերվերներ

Սերվերները ներառելու են մոդուլի ինտերֆեյսի բաղադրիչները, ինչպես նաև որոշ ընդհանուր ծառայությունների արտաքին հատվածները: Այս սերվերների կարգավորումը պետք տրամադրի

խափանումներից պատշաճ կերպով երաշխավորում և ընդլայնելիության հնարավորություն՝ ապահովելով համակարգի բարձր հասանելիություն և ավելացող բեռնվածությանն աջակցում և բալանսավորում:

1.4.1.2 Հավելվածի սերվերներ

Այս սերվերները ներառելու են մոդուլի ներքին բաղադրիչները, ինչպես նաև որոշ ընդհանուր ծառայությունների ներքին հատվածները: Դրանք նաև ներառելու են համակարգի աշխատանքն ու փոխանցման մեխանիզմները:

Այս սերվերների կարգավորումը պետք տրամադրի խափանումներից պատշաճ կերպով երաշխավորում և ընդլայնելիության հնարավորություն: Այդ իսկ պատճառով, ցանկալի կլինի ունենալ մի քանի հավելվածային սերվերներով կոնֆիգուրացիա վեբ դաշտում կամ կլաստերային կառուցվածքում՝ բեռնվածությունը հավասարակշռելով և անհրաժեշտ կրկնօրինակում առաջարկելով:

1.4.1.3 Տվյալների բազայի սերվեր

Տվյալների բազայի սերվերները ներառելու են տվյալների բազայի մեխանիզմներ: Այդ սերվերների կարգավորումները տրամադրում են խափանումներից պատշաճ կերպով երաշխավորում և ընդլայնելիության հնարավորություն: Առաջարկվում է նախատեսել առնվազն տվյալների բազայի երկու դեպք: Կիրառել տվյալների հենքի ռեպլիկացիայի սկզբունքներ օրինակ (Master-Master կամ Master-Slave մոտեցումներ)

1.4.1.4 Ֆայլային սերվերներ կամ փաստաթղթերի կառավարման համակարգ

Ֆայլային սերվերներն ապահովում են մուտք դեպի ֆայլերի բազա, օրինակ՝ տեխնիկական առաջարկներ, որակավորման փաստաթղթեր և գնային առաջարկների ներկայացման փաստաթղթեր: Ցանկալի է ունենալ փաստաթղթերի կառավարման համակարգ բինար ֆայլային սերվերի փոխարեն՝ օգտվելով արտադրանքի առաջարկած այնպիսի առանձնահատկություններից, ինչպիսիք են՝ պահպանումը, տարբերակումը և վերականգնումը: Open Source Enterprise Content Management solution թույլատրելի և ցանկալի է:

1.4.1.5 Պահպանման հնարավորություն

Պահպանման հնարավորությունը օգտագործվելու է պահպանելու համար տվյալների բազան, ֆայլերը և համակարգի այլ տվյալներ: Կիրառել տվյալներ հենքի և ֆայլային համակարգերի ավտոմատացված արխիվացման սկզբունքներ:

1.4.1.6 Նույնականացման ծառայություններ

Նույնականացումն իրականացվելու է օգտատիրոջ և գաղտնաբառի հիման վրա: Ոչ մի այլ նշան նախատեսված չէ: Առկա LDAP-ի և էլեկտրոնային գնումների համակարգի միջև ինտեգրումն այս ծրագրի շրջանակներում է:

1.4.1.7 Էլ. փոստի ծառայություններ

Էլ. փոստի ծառայությունները պետք է թույլ տա ուղարկել հաղորդագրություններ օգտատերերին՝ հնարավորություն տալով HTML կոդով կարգավորել ծանուցումները:

1.4.1.8 Մոնիտորինգ ծառայություններ

Մոնիտորինգ ծառայությունները պետք է երաշխավորեն, որ համակարգում կատարված յուրաքանչյուր հաջող կամ անհաջող գործարք պատշաճ կերպով՝ օգտակար և հասկանալի նկարագրությամբ և ժամանակային նշումով, պահպանվում է տեղեկամատյանում, այնպես, որ հնարավոր լինի ուսումնասիրվել համակարգի ադմինիստրատորների կողմից:

2 Մեթոդական մոտեցում

Համակարգերի մշակումը պետք է իրականացվի երկու հիմնական փուլով՝ << ֆինանսների նախարարության կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

2.1 Մշակման փուլերը և արդյունքների ներկայացման ժամանակացույցը

Ծրագրային ապահովման նախագծման և ներդրման ծառայությունները պետք է մատուցվեն երեք փուլով, ներկայացնելով՝

1-ին փուլի ավարտին՝ պայմանագրի մեկնարկից հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, գործող համակարգերի, ՀՀ օրենսդրությամբ և բիզնես պրոցեսներով սահմանված գործընթացների ուսումնասիրության արդյունքները և առաջարկվող մոտեցումները, ներառյալ գործառութային և տեխնիկական լուծումները, տեխնիկական սարքավորումների նվազագույն պահանջները, գործառնական աջակցության տրամադրման պայմանները, սպասարկման և երաշխիքի փուլերն ու պայմանները:

2-րդ փուլի ավարտին՝ 1-ին փուլի հաշվետվությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատվելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում հաստատված տեխնիկական մասնագրերի հիման վրա մշակված, թեստավորված, գնահատված և ՀՀ ֆինանսների նախարարություն տեղակայված լիարժեք գործող համակարգ, ինչպես նաև 2-րդ փուլի հաշվետվությունը, պատվիրատուի և տնտեսական օպերատորի ձեռնարկները:

3-րդ փուլի ավարտին՝ համակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընդունվելու օրվանից 5 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության մինչև 10 աշխատակցի վերապատրաստում, որոնք ձեռք կբերեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ համակարգի կառավարման համար: Վերապատրաստումը կիրականացվի մեկ խմբի համար, որի տևողությունը կլինի մինչև մեկ շաբաթ: Վերապատրաստման հետ կապված ծախսերը կհոգա համակարգը մշակողը:

Բոլոր հաշվետվությունները, ներառյալ դրանց կցված նյութերը պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով, իսկ տնտեսական օպերատորի ձեռնարկը՝ նաև ռուսերեն:

Ակնկալվում է, որ կատարված աշխատանքների արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունը կունենա՝

Առաջին փուլի հաշվետվություն, որը կներառի ՀՀ օրենսդրությամբ և բիզնես պրոսեցներով սահմանված գործող համակարգերի և ընթացակարգերի ուսումնասիրության արդյունքները:
Առաջին փուլի հաշվետվությունը, ներառյալ

- համակարգի գործառութային մասնագրերը:
- համակարգի տեխնիկական մասնագրերը:
- համակարգի շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների համար նվազագույն պահանջների նկարագրությունը:

- Հետևյալի՝ Պատվիրատուի կողմից վերոշարադրյալի հաստատում՝

- համակարգի գործառութային մասնագրեր, տեխնիկական մասնագրեր
- համակարգի շահագործման համար տեխնիկական սարքավորումների նվազագույն պահանջների հաստատում:

Հաշվետվության շրջանակներում, որը պետք է ներկայացվի 1-ին փուլի շրջանակներում, համակարգի նախագծման համար տեխնիկական լուծումները պետք է ներառեն տարբերակներ՝ սույն տեխնիկական առաջադրանքում սահմանված բոլոր պահանջներն ապահովելու նպատակով:

Երկրորդ փուլի հաշվետվություն, այդ թվում.

- Ամբողջությամբ գործող համակարգի՝ թեստավորված, պիլոտային սկզբունքով փորձարկված և տեղադրված ՀՀ ֆինանսների նախարարությունում: Ամբողջական, ինտեգրված համակարգի թեստային տարբերակը պետք է փորձարկվի իրական տեխնիկական միջավայրում (նախատեսվող սերվերի վրա): Թեստավորման սցենարը պետք է մշակվի Կատարողի կողմից և ի սկզբանե համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Թեստային տարբերակի տեղադրման ընթացքում և բուն թեստավորման ընթացքում մասնակիցները պետք է օգտվեն Օգտվողի ձեռնարկից: Համակարգը կհամարվի հաջողությամբ թեստավորված, եթե անխափան կերպով ապահովի Տեխնիկական առաջադրանքում սահմանված պահանջների կատարումը:
- համակարգի սկզբնական (source codes) կոդերը (համապատասխան նկարագրություններով) արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա: Ընդ որում ծրագրային (source codes) կոդերը արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա փակվում են ծրարի մեջ, որը Կողմերը երկկողմանի ստորագրում և կնքում են, յուրաքանչյուրի մոտ պահվում է փակ ծրարի մեկ օրինակ:

Ծառայությունը մատուցողին նախապես ծանուցելով՝ Պատվիրատուն սեփական նախաձեռնությամբ իրավունք ունի բացել Ծրագրի կոդերը հետևյալ դեպքերում.

- Կատարողի կողմից ծրագրի սպասարկման դադարեցման և Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու, ընդ որում, ստուգում իրականացնելու նպատակով Պատվիրատուն Ծրագրի կոդերը փոխանցում է նոր կատարողին:
- Կատարողի վերաբերյալ սննկացման գործընթացի մասին տեղեկությունների ի հայտ գալու պահից՝ անհապաղ:
- Մինչև նոր կատարողի հետ պայմանագիր կնքելը՝ Պատվիրատուի կողմից ծրագրի շահագործման ժամանակահատվածում ծրագրի թերությունների մասին հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում:

Վերոգրյալ դեպքերում, եթե վերլուծության ընթացքում հաստատվի, որ Կատարողի մեղքով ծրագիրն իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն ծրագրի ֆունկցիոնալ նկարագրով և վտանգում են Պատվիրատուի տվյալների գաղտնիությունը, հասանելիությունը կամ ամբողջականությունը, կամ որևէ կերպ խոչընդոտում են ծրագրի անխաթար աշխատանքին, ապա Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կատարողից պահանջել պատճառված վնասների հատուցում և ծրագրի վերականգնում:

Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել կոդերի վերլուծություն:

Նոր կատարողի կողմից Ծրագրի կոդերը ստուգվելու և դրանցում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում Կատարողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարում են:

- Համակարգի տվյալների շտեմարանի դամփը և կառուցվածքի նկարագրությունը
- Օգտվողի ձեռնարկը
- Գործառնական ձեռնարկը
- Սպասարկման ձեռնարկը
- Համակարգի տեղակայման ձեռնարկը
- Հաստատված փոփոխություններով տեխնիկական մասնագրերի տարբերակը

Երրորդ փուլի հաշվետվություն, այդ թվում.

- ՀՀ ֆինանսների նախարարության մինչև 10 աշխատակցի վերապատրաստում, որոնք ձեռք կբերեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ համակարգի կառավարման համար: Վերապատրաստումը կիրականացվի մեկ խմբի համար, որի տևողությունը կլինի առնվազն 12 ժամ: Վերապատրաստման հետ կապված ծախսերը կհոգա համակարգը մշակողը:
- վերապատրաստման նյութեր:

Կատարողի բոլոր հաշվետվությունները կլինեն անգլերեն և հայերեն թարգմանությամբ (երկու տարբերակներն էլ պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով և երեք տպագիր օրինակով):

Փուլ 3-ի վերջում նախանշվող Ծրագրային ապահովումը կհամարվի հաջողությամբ փորձարկված, եթե ապահովի տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջները:

Երաշխիք

- Ծրագրային ապահովումը մշակողի կողմից պահանջվում է տրամադրել երաշխիքային ժամկետ՝ Ծառայության արդյունքի շահագործումը սկսվելու տարվան հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ընդ որում եթե համակարգի անվտանգության խոցելիության թեստի արդյունքում ի հայտ կգան խնդիրներ, ապա Կատարողը իր միջոցների հաշվին՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, պետք է ապահովի ի հայտ եկած խնդիրների լուծումը, մինչև դրանց ամբողջական վերացումը: Ընդ որում Ծրագրային ապահովման շահագործումը սկսվելուց 8 ամսվա ընթացքում Կատարողը պետք է անվճար ապոհովի Ծրագրային ապահովման շահագործման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արձանագրված՝ բիզնես պրոսեցների և/կամ տեխնիկական պայմանների բարելավում կամ անհամապաստախանությունների շտկում՝ անհրաժեշտության դեպքում նաև Ծրագրային ապահովման մեջ փոփոխություններ կատարելու ձևով: Փոփոխությունները և/կամ բարելավումներն իրականացվում, թեստավորում և իրական համակարգում ներդրվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նման պահանջ սահմանվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Կատարողը կտրամադրի գիտելիքների փոխանցման փաստաթղթերը, այդ թվում նաև համակարգի կառավարման (system administration) ձեռնարկը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)՝ 72261160/2

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017523
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

------------------------ Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570063238750100
ՀՎՀՀ՝ 02677364
Տնօրեն՝

------------------------ Գ. Շահբազյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 17 » մարտի 2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/2	էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ փոփոխություններ կատարելու ծառայություններ				7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000	7 140 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017523
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Հակոբյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570063238750100
ՀՎՀՀ՝ 02677364
Տնօրեն՝

_____ Դ. Շահբազյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 17 » մարտի 2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 17 » մարտի 2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն